

Միջազգայնականներու ձուլման, — երեւոյթ մը, որ անխուսափելիօրէն չափազանց պիտի տկարացնէ կոմունիստներու դիրքը միջազգային բանուորութեան հանդէպ, զօրաւոր թափով մը շրջելով աշխատանքարարական տրամադրութիւնները ընդդէմ Մոսկուայի կարմիրազգեստ բռնաւորներուն:

Բոլշեւիկներու ասիական բռնի մեթոտները եւ անոնց առաջ բերած յոռի հետեւանքները ամենուրեք կը ստիպեն ընկերակարական կազմակերպութիւնները սպառել իրենց ուժերու շատ կարեւոր մասը ամուլ, անիմաստ պայքարներու մէջ միանգամայն ապարդիւն կերպով, հրաժարուել յարձակողական քաղաքականութենէ հանդէպ բուրժուական պետութեանց եւ գրաւել պաշտպանողական դիրքեր:

Միջազգային բանուորութիւնը հետզհետէ լուրջ նշաններ ցոյց կուտայ, թէ սկսած է արդէն շատ յստակ կերպով գիտակցել բոլշեւիկեան շարժման իսկական էութիւնը, որ ոչաքսիոն, յետադէմ է իրօք: Որքան ատեն որ ուսական սահմանները փակ էին եւ Եւրոպական սոցիալիստները ի վիճակի չէին անձամբ տեսնելու բոլշեւիկներու ստեղծած «կոմունիստական դրախտները», հարկաւ շատ ուժեղ էին հեռուոր երկիրներու բանուոր դասակարգի մէջ պատրանքները «խորհրդային» իշխանութեան կատարած փորձերու մասին: Բայց ճամբաները բացուեցան եւ շատ շատեր ի վիճակի եղան երթալու Ռուսիա եւ մօտէն ծանօթանալու բոլշեւիկներու ստեղծած «բանուորա-գիւղացիական» կարգերուն: Եւ այժմ քօղերը վար են առնուած խորհրդային Ռուսիոյ դէմքերու եւ դէպքերու վրայէն:

Վերջին հարուածը հասցուց բոլշեւիկներու «կարմիր հմայքին» սոցիալիստ-յեղափոխականներու դատաւարութիւնը, որ տեղի ունեցաւ Մոսկուայի մէջ քանի մը ամիս առաջ: Եւրոպական ընկերակարական կուսակցութեանց ղեկավարներէն շատերը դացին Ռուսիա, ներկայ եղան բոլշեւիկներու սարքած զղուելի խեղկատակութեան, որու նպատակն էր մահուան դատապարտել ոռւս մեծահամբաւ եւ բազմամաստակ սոցիալիստական կուսակցութեան անձնուէր գործիչները: Եւրոպական սոցիալիստները անդամ մը եւս համոզուեցան, որ Մոսկուայի ներկայ «կարմիր» տէրերը

նոյնքան անողոք թշնամիներ են բանուոր դասակարգի դատին, որքան եւ ամէն մէկ բուրժուական իշխանութիւն: Անոնք տեսան, որ ոռւս «կոմունիստներու» կառավարութիւնը սոցիալիստներու հանդէպ կը վարուի նոյնպէս, ինչպէս ցարի կառավարութիւնը: Եւ վրդովմունքի ու բողոքի հսկայ այլք մը բարձրացաւ միջազգային բանուորութեան շարքերուն մէջ:

Միջազգային սոցիալիստական շարժման ամենէն հեղինակաւոր գաղափարաբանը՝ ծերունի Կ. Կառուցիկին, որ ատենօք եղած է նաեւ Լենինի ու ընկերներու ուսուցիչը, սոցիալիստ-յեղափոխականներու դատաւարութեան առիթով գրուած իր մէկ յօդուածին մէջ բողշեւիկներու հասցէին կ'ուղղէ ծանրակշիւ խօսքեր, որոնք՝ իբրեւ արդիւնք բոլշեւիզմի մասին ըրած իր մանրակրկիտ գիտական ուսումնասիրութեանց՝ կը ներկայացնեն մահուան անողոք դատաւճիւր մը: Կ. Կառուցիկին կ'ըսէ —

«Բոլշեւիկեան ռեժիմը հասունցած է կործանման համար: Տակաւին կարելի չէ ըսել, թէ ե՞րբ եւ ի՞նչ կերպ ան պիտի իյնայ. բայց մէկ բան կարելի է այժմ իսկ պնդել կատարեալ վստահութեամբ.

— Բոլշեւիզմը պիտի իյնայ ամօթով եւ խայտառակութեամբ: Անոր անկումը պիտի ողբան թերեւս դրամատիրական աշխարհի չարաչանները: Բայց իր ազատութեան համար պայքարող գործաւոր դասակարգը անէճքի խօսքեր պիտի գտնէ միայն անոր հասցէին: Որ բոլշեւիկեան բռնատիրութիւնը այդպիսի վախճան պիտի ունենայ, ատոր ապացոյց կըրնայ ծառայել սոցիալիստ-յեղափոխականներու դատաւարութիւնը»:

Այս դատաւճիւրը նաեւ մահուան դատաւճիւր մըն է այն մեթոտներուն եւ առանձնաշատուկ գաղափարներուն, որոնցմով ա՛յնքան տխուր հռչակ ձեռք բերին բոլշեւիկները ամէն տեղ:

«Համաշխարհային յեղափոխութեան» գաղափարը եւս, որ անոնց գլխաւոր նպատակն է, դատապարտուած է բաժնելու բոլշեւիկներու տխուր բախտը: Յամենայն դէպս ներկայ դարաշրջանի մէջ անիկա ցնորք մըն է — բողշեւիկեան ցնորք մը:

(Շարունակելի)